

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա խնդիրը

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ միասին՝ Նախագծեր) մշակումը բխում է վարչական դատարանի ծանրաբեռնվածության թեթևացման, ինչպես նաև վարչական դատարանի իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

2. Առկա իրավիճակը

Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխությունների մասով.

1. Օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Սակայն հոդվածում մանրամասն կարգավորված չեն պետական տուրքի հետ կապված որոշակի հարցերը: Մասնավորապես, կարգավորված չեն դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու, հիմնական պահանջից բացի, ածանցյալ պահանջներ ներկայացնելու դեպքում պետական տուրքի գանձման հարցերը:

2. Օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:

Փաստորեն Օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների կողմից հայց հարուցելու համար օրենսդիրը սահմանել է նախապայմաններ, որոնք հետևյալն են.

➤ պետք է համարեն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի իրավունքները,

➤ այդ իրավունքների պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա և,

➤ այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

Այսինքն՝ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների կողմից ներկայացված հարցի վարույթ ընդունելու հարցի լուծումը պայմանավորված է վերոգրյալ հանգամանքների պարզմամբ, ուստի անհրաժեշտ է հայցադիմումին ներկայացվող պահանջների մեջ ավելացնել պահանջ առ այն, որ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումը պետք է պարունակի նաև վերոգրյալ տեղեկությունները:

3. Օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը բողոքարկվելու և վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը: Մինչդեռ, գործնականում լինում են դեպքեր, երբ վերաքննիչ վարչական դատարանն ընդունում է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու մասին որոշում, սակայն առկա են լինում հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

4. Օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի (...) դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները:

09.04.2018 թվականից ուժի մեջ մտած նոր Քաղաքացիական դատավարության օրենսգրքով վճռի պարզաբանման հնարավորություն նախատեսված չէ:

5. Օրենսգրքով սահմանված չէ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների որոշումների մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ որոշում կայացնելու հնարավորություն:

6. Օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասում թվարկված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման:

Համանման կարգավորում նախատեսող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածում սահմանվել է որոշ հիմքերի առկայության պարագայում դատական ակտը՝

անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից անվերապահ բեկանելու կանոն, որպիսի կարգավորում առկա չէ Օրենսգրքում: Մինչդեռ, դատական ակտի անվերապահ բեկանման որոշ հիմքերի առկայության դեպքում անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտը պետք է բեկանվի:

7. Օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է:

Սահմանված ժամկետը լրանալուց հետո բերված լինելու և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացված չլինելու պարագայում, առանց բողոք բերող անձին բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորություն ընձեռելու վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափ սահմանափակում է բողոք բերած անձի դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքը:

Այսպես, օրինակ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքով բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության բացակայությամբ վճռաբեկ բողոքը սահմանված ժամկետը լրանալուց հետո բերված լինելը հանդիսանում է վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք:

8. Օրենսգրքով սահմանված չէ, թե ինչ որոշում պետք է կայացնի Վճռաբեկ դատարանն այն դեպքում, երբ բողոք բերող անձը չի վերացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները, կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:

9. Օրենսգրքով սահմանված չէ, թե ինչ որոշում պետք է կայացնի Վճռաբեկ դատարանն այն դեպքում, երբ մերժել է պետական տուրքի արտոնություն կիրառելու մասին միջնորդությունը:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև սահմանված ժամկետը լրանալուց հետո վճռաբեկ բողոք բերած անձին բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է Օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել:

10. Օրենսգրքի «**Վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում**» վերտառությամբ **166.1-րդ** հոդվածն ամբողջությամբ չի կարգավորում դատական նիստում վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնելու հարցերը:

11. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման դատավարական կանոնները սահմանված են Օրենսգրքի 4-րդ բաժնում (գլուխ 25, հոդվածներ 180-190):

Նշված բաժնի իրավակարգավորումների համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման համար ներկայացվում է դիմում, այլ ոչ թե բողոք:

Ընդ որում՝ նույն բաժնում ներառված հոդվածներով են սահմանված նաև նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը, այդ հիմքերով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները, ժամկետները, դիմումի ձևին և բովանդակության ներկայացվող պահանջները, դիմում ներկայացնելու, դիմումը վարույթ ընդունելու, վերադարձնելու կարգը:

Միևնույն ժամանակ Օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտերը վերանայում է բողոքի հիման վրա:

Բացի այդ, Օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքում, ի թիվս այլնի, նշվում են նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնավորումները, իսկ վճռաբեկ բողոքը 158-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանելը, Օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք է հանդիսանում:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը սահմանված են Օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասում, որի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայություն է նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքը:

Փաստորեն մի կողմից վերաքննիչ դատարանի դատական ակտերը Վճռաբեկ դատարանը վերանայում է միայն բողոքի հիման վրա և նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնավորումները պետք է նշվեն վճռաբեկ բողոքում, իսկ դրանք չնշելը, հիմք է վճռաբեկ բողոքը վերադարձնելու համար, մյուս կողմից նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման համար ներկայացվում է դիմում, այլ ոչ թե բողոք, իսկ Օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված են դիմումը վերադարձնելու ինքնուրույն, Օրենսգրքի 160-րդ հոդվածից տարբերվող հիմքեր: Այսպես օրինակ, Օրենսգրքի 160-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջներին, իսկ Օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջներից է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը) վճռաբեկ բողոքին կցելը, մինչդեռ նոր

երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումին վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը) կցելու կանոն Օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված չէ, հետևաբար Օրենսգրքի 188-րդ հոդվածի կիրառմամբ ենթակա չէ վերադարձման:

Ուստի անհրաժեշտ է Օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ բացառելու համար միևնույն հարցի վերաբերյալ իրարից տարբերվող իրավակարգավորումները:

12. Օրենսգրքի նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հատուկ վարույթի կարգավորմանը նվիրված 26-րդ գլխում կան կարգավորումներ, որոնք «հին» են և չեն համապատասխանում օրենսդրական գործող կարգավորումների տրամաբանությանը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխությունների մասով.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ նշված օրենսգրքով նախատեսված է անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու երկու կարգ՝ արտադատարանական, որն իրականացվում է նույն օրենսգրքով սահմանված՝ կոնկրետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից, և դատական, որն իրականացվում է դատարանների կողմից: Վարչական կարգով վարչական պատասխանատվությունը կիրառվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով՝ այդ օրենսգրքով նախատեսված ենթակայությանը համապատասխան: Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկում է վարչական դատարանը Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով վարչական դատարանի և համապատասխան վարչական մարմինների քննությանը վերապահված վարչական իրավախախտումների շրջանակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, երբեմն, նման տարբերակումը տրամաբանական հիմնավորում չունի, և վարչական դատարանին է վերապահված այնպիսի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը, որոնց համանման բնույթ ունեցող իրավախախտումների քննությունը վերապահված է վարչական մարմնին, կամ որոնք կարող էին վերապահվել իրավասու վարչական մարմնի քննությանը՝ ավելորդ չձանրաբեռնելով վարչական դատարանին: Այս համատեքստում հետաքրքրական է, որ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է այն մտտեցումը, որ վարչական պատասխանատվությունը՝ որպես վարչական զանցանք կատարած անձի նկատմամբ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ հարկադրանքի միջոցների կիրառում, պետք է իրացնի համապատասխան վարչական մարմինը, որն այդ զանցանքի կապակցությամբ իրականացնում է վարչարարություն¹:

¹ Վարչական պատասխանատվության դիմամիկ և ստատիկ ասպեկտների, վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտի վերաբերյալ ավելի մանրամասն, օրինակ, Бельский

Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի առանձնահատկություններին անդրադարձել է Սահմանադրական դատարանն իր 2010 թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշմամբ: Սահմանադրական դատարանը նշել է, որ անձի իրավունքները խախտած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը հանդիսանում է անձի իրավունքի դատական պաշտպանության բաղադրատարր:

Անդրադառնալով վարչական պատասխանատվության նպատակին, վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, ինչպես նաև «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում, Սահմանադրական դատարանը նշել է, որ վարչական պատասխանատվությունը՝ ընդհանրապես, և վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է: Վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին:

Սահմանադրական դատարանը գտել է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր և, հետևաբար, անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացմանը:

Նման դիրքորոշման մասին կարող է վկայել նաև այն փաստը, որ եվրոպական երկրներում կամ նախատեսված է վարչական պատասխանատվության միայն արտադատարանական կարգ, կամ առկա է դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտից հրաժարվելու միտում:

Ամբողջ վերոնշվածի համատեքստում՝ նպատակ ունենալով թեթևացնել վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը, անհրաժեշտություն է առաջանում վերանայել վարչական

К.С., Административная ответственность: генезис, основные признаки, структура // Государство и право. N 9, 1999, էջ 15-16, 19:

դատարանի քննությանը վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի շրջանակը, և այն վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, որոնք արդյունավետորեն կարող են քննվել իրավասու վարչական մարմնի կողմից, վերապահել վերջինիս: Այս համատեքստում հարկ է կարևորել այն հանգամանքը, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքն այս դեպքում չի սահմանափակվում, քանի որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքով ընդունվող վարչական տույժ նշանակելու մասին վարչական մարմնի որոշումը կարող է վիճարկվել վարչական դատարան:

3. Նախագծերի նպատակը և ակնկալվող արդյունքը

Նախագծի նպատակը վարչական դատարանի ծանրաբեռնվածության թեթևացումը և իրավակիրառ պրակտիկայում բարձրացված խնդիրների լուծումն է:

Նախագծերով նախատեսվում են հետևյալ հիմնական կարգավորումները՝

Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխությունների մասով.

1. Կարգավորվում են դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու, հիմնական պահանջից բացի, ածանցյալ պահանջներ ներկայացնելու դեպքում պետական տուրքի գանձման հարցերը:

2. Հայցադիմումին ներկայացվող պահանջների մեջ ավելացվում է պահանջ առ այն, որ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումը պետք է պարունակի այդ մասով նախատեսված տեղեկությունները:

3. Նախատեսվում է, որ եթե վերաքննիչ վարչական դատարանն ընդունում է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու մասին որոշում, ապա վարչական դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են սույն օրենսգրքով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքերը:

4. Սահմանվում է վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների որոշումների մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ որոշում կայացնելու հնարավորություն:

5. Սահմանվում է որոշ հիմքերի առկայության պարագայում դատական ակտը՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից անվերապահ բեկանելու կանոն:

6. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության բացակայությամբ վճռաբեկ բողոքը սահմանված ժամկետը լրանալուց հետո բերված լինելը սահմանվում է վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք:

7. Սահմանվում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված

թերությունները չվերացվելու, բողոքը կրկին ներկայացնելու դեպքում նոր խախտումներ թույլ տալու, վճռաբեկ բողոքը սահմանված ժամկետը լրանալուց հետո բերվելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայելու, պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքում վճռաբեկ բողոքն առանց քննության է թողնվում:

8. Կարգավորում են դատական նիստում վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնելու հարցերը:

9. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման դատավարական կանոնները համապատասխանեցվել են Օրենսգրքի գործող կարգավորումներին:

10. Օրենսգրքի նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հատուկ վարույթի կարգավորմանը նվիրված 26-րդ գլխում կարգավորումները համապատասխանեցվել են օրենսդրական գործող կարգավորումների տրամաբանությանը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխությունների մասով.

Որոշ, մասնավորապես, միջուկային անվտանգության ապահովման, պրոբացիայի ծառայության բնագավառների, հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելու, ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու, պետական մարմին (պաշտոնատար անձին) տեղեկատվություն չտրամադրելու վերաբերյալ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը վերապահվում է իրավասու վարչական մարմիններին:

4. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

5. Օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագծերի մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրից, որի Վարչական և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումների 7-րդ նպատակում որպես գործողություն նախատեսված է Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում գույքագրված խնդիրների հիման վրա Վարչական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի փաթեթ մշակում: